

Անկախություն  
21.09.2020 29

# Մեր հանրահիշ

**TK&PARTNERS**  
WEEKLY CLIENT ALERT N 21

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ՆԱԽԱԳԾԵՐ
2. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՈԼՈՐՏ
3. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՕՐԸ

#YourSupportTeam



Corporate  
Governance  
Center



IFLR1000

Chambers  
AND PARTNERS

# ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ՆԱԽԱԳԾԵՐ

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐԵՆԳՐՈՒՄ



Ըստ Աշխատանքային օրենգրքում փոփոխություններ կատարելու մասին նախագծի՝

- երեխա խնամող անձի աշխատանքի էական պայմանները այդ ամբողջ ժամանակահատվածում չեն կարող փոփոխվել դեպի նվազ բարենպաստի, բացառությամբ պաշտոնի անվանման և/կամ տարակարգերի,

- նախատեսվում է հայրության արձակուրդ, որը տրամադրվում է երեխայի ծնվելու օրվանից 30 օրվա ընթացքում 5 աշխատանքային օր (վճարովի արձակուրդ) տևողությամբ:

- Գործատուին արգելվում է լուծել զբաղեցրած պաշտոնին կամ կատարած աշխատանքին չհամապատասխանող անձի հետ կնքված աշխատանքային պայմանագիրը, եթե վերջինս փաստացի խնամում է մինչև մեկ տարեկան երեխայի: Արգելքը տարածվում է խնամելու ամբողջ ժամանակահատվածի վրա:
- Գործատուին արգելվում է երեխային փաստացի խնամող՝ արձակուրդում չգտնվող անձի անհարգելի պատճառով ամբողջ աշխատանքային օրվա (հերթափոխի) ընթացքում աշխատանքի չներկայանալու դեպքում լուծել վերջինիս հետ կնքված աշխատանքային պայմանագիրը:

Օրենսդրական նախագիծն ընդունվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից երկրորդ ընթերցմամբ: Ավելին՝ [հղումով](#)

# ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՈԼՈՐՏ

## ՎԵՐԱՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԻ ՆՎԱԶԵՑՈՒՄ

Կենտրոնական բանկը 0.25 տոկոսային կետով նվազեցրել է վերաֆինանսավորման տոկոսադրույքը՝ այն սահմանելով 4.25%: Այս քայլը մաս է ներկայիս ճգնաժամային իրավիճակում Կենտրոնական բանկի՝ ոչ միայն կարճաժամկետ, այլև միջնաժամկետ կտրվածքով դրամավարկային պայմանների խթանման քաղաքականության: Համապատասխան որոշումը Կենտրոնական բանկի խորհրդի կողմից ընդունվել է սույն թվականի սեպտեմբերի 15-ի նիստում:

Ավելին՝ [հղումով](#)



#YourSupportTeam



Corporate  
Governance  
Center



IFLR1000

Chambers  
AND PARTNERS

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՕՐԸ

Հայաստանը լինելով աշխարհի ամենահին երկրներից՝ միշտ պայքարել է իր անկախության համար: Պայքարի ճանապարհին մեր երկիրն ունեցել է և՛ ցավալի պարտություններ և՛ փառահեղ հաղթանակներ: 1991 թվականի սեպտեմբերի 21-ը մեր պատմության ամենահիշարժան օրերից է:

Ամեն տարի այդ օրը մենք նշում ենք Խորհրդային Միությունից անկախացումը և Հայաստանի Հանրապետության հռչակումը:

Անկախության հրչակագիրն ընդունվել է դեռևս 1990 թվականի օգոստոսի 23-ին Հայաստանի գորագույն խորհրդի կողմից: Այս փաստաթղթով Հայաստանի Սովետական Սոցիալիստական Հանրապետությունը վերանվանվել է Հայաստանի Հանրապետության:

Մեկ տարի անց, 1991 թվականի սեպտեմբերի 21-ին, Հայաստանի գերագույն խորհրդի որոշմամբ անցկացվեց հանրաքվե՝ Սովետական Միությունից անկախանալու նպատակով, որին մասնակցեց բնակչության 94,99 տոկոսը և քվեարկեց անկախության օգտին: Երկու օր անց, սեպտեմբերի 23-ին, Հայաստանի գերագույն խորհուրդը Հայաստանը հռչակեց անկախ հանրապետություն:

